

X

# ՏԵՐ-ԳԱՐԻՒԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆՑԸ<sup>1)</sup>

Դլովս Ե.

«Ներսէսի լրտես» խօսքերը Տէր-Գարբիկէլ Տէր-Գարբիկէ-լւանի թեթև բերանով շուտով հռչակուում է քաղաքում և թշնամտցնում Գարբիկի հետ և այն աղաներից շատերին, ո-րոնք թէև մի առանձին սէր էլ չունէին դէսի Պատկանեանց սարկաւազը, գոնէ, ատեցող, թշնամի էլ չէին նորան։ Առհա-սարակ նախիշեանի մեծամեծները չէին սիրում ենթարկուել իւրեանց հոգևոր իշխանաւորներին, դժկամակում էին, չէին ըն-դունում նոցա հեղինակութիւնը եկեղեցական գործերում, եկե-ղեցական գումարների հաշիւը չէին ուզում տալ և իրանց լիա-կատար տէր էին համարում թէ եկեղեցիների և թէ նոցա պատ-կանած գոյքերի։ Այդ հանգամանքից առաջ էր գալիս անրնդհատ կագ ու կոխ առաջնորդների և նոցա մէջ, անրնդհատ խոռ-վութիւն էր ծագում քահանաների ճեռնազրութեան, մազիս-տրափի և քաղաքային դումի հոգևոր կառավարութեան գոր-ծերին խառնուելու, քաղաքադլիսի առաջնորդների իշխանութիւն բանեցնելու վերաբերմամբ։ Նոքա իւրեանց այդ ծգտումով և ուղղութեամբ ամբողջ 20 տարի մաքառել էին Յովսէփի դէմ, 10 տարի Եփրեմի և 15 տարի Յովհաննիսի։ Նոքա մինչև ան-դամ հաշտ չէին եղել բարեհոգի Պետրոս Մարկոսեանի հետ, նորանից ծածուկ լարաբերութեան մէջ մտնելով ուսւ իշխանա-ւորների հետ, չենք խօսում արդէն այն մեծ նեղութիւնների մասին, որ տուել էին նոքա հանգուցեալին Սամարում գաղթա-կանութեան ժամանակ։ Այժմ էլ ահա հաստատուել էր նոր ա-ռաջնորդ, և նոքա պատրաստուում էին նոյնը անել, նոյն դիր-քը բռնել և ներսէսի վերաբերմամբ։ և այդպիսի հանգամանք-ներում յանկարծ նոքա իմանում են, որ իրանց մէջ կայ մէկը,

\*) Լումայ 1907 № 3—4

որ նորա լրտեսն է, ուրեմն, և հասարակութեան ու քաղաքի թշնամի:

Միմեանց յաջորդող դէպօերն էլ շուտով այն ընաւորութիւնն են ընդունում, որ կարծես թէ գալիս են իրականացնելու նոյա ենթադրութիւնները Գարբիկի մասին և հաստատելու լուրք: Երբոր Ներսէսը կարգուում է առաջնորդ, ամեն տեղ թուղթ է ուղարկում և տեղեկութիւն խնդրում վիճակների մասին: Մի այդպիսի թուղթ էլ գալիս է Նախիչևանի հողեր Կառավարութեան վերայ: Տէր-Գարբիկեանը պատասխանում է, թէ քարառուզար չունենալու պատճառով, չի կարող ցանկացած տեղեկութիւններն ու հաշիւնները հաղորդել, այն ինչ հենց դժյն խսկ ժամանակները առաջնորդը մի թուղթ էր ստացել Տէր-Աստուածատրից, թէ նա 17 տարի ծրի քարտուզարութիւն է անում, բայց ամեն տարի տօնավաճառ է դնում Տէր-Գարբիկը, և խնդրում էր, որ իրան թոյլարուի Մակարիս երթարու: Ներսէսն այդ երկու միմեանց հակասող թղթերը ուղարկում է Գարբիկին, որ նա Խաչատուր Խռմաջեանի հետ խորհրդակցելով, իմաց տայ իրան գործի էութիւնը: Տէր-Գարբիկը տեղեկանանալով, որ Գարբիկը նշանակուած է իւր վերայ դատաւոր, իսկոյն իմաց է տալիս նորա հակառակորդներին, որոնք և հաւաքուելով, աշխատում են ամեն տեսակ կոռուցնել նորան Ներսէսի հետ: — նոքա համոզում են նորան, որ նա յետ դարձնէ Ներսէսին Տէր-Գարբիկի մասին ուղարկուած թղթերը և ասէ, թէ ժամանակ չունիմ: Գարբիկը ընկնում է մեծ նեղութեան մէջ, որովհետու մի կողմն էր հղօր իշխանութիւնը, միւս կողմը հասարակութիւնը: Այս առթիւ է լինում, որ Խաչատուր Խռոմաջեանը, բատ իւր սովորութեան, կրկնում է. «զարմանալի, զարմանալի, զարմանալի» բան: Ֆեր քաղաքացիք մեղաղքում են, թէ առաջնորդներն ուտում են եկեղեցու փողերը, իսկ ինքեանք թէ եկեղեցիների, թէ առաջնորդահաս և թէ աթոռահաս դրամները ուտեցնում են մի տէրտէրի: Գարբիկը այս դժուարութիւնից դուրս գալու համար, հրաւիրում է Խռմաջեանին, Տէր-Գարբիկին, Տէր-Աստուածատրին և Կիրակոս աղա Արարատեանին և դրցա ստորագրութեամբ մի պատասխան է գրում Ներ-

սէսին, թէ, ճիշդ է, Տէր-Աստուածատուրը 17 տարի ծրի ժառայում է կառավարութեան մէջ, բայց քարտուղարի անունը կրում է Կիրակոս աղա Արարատեանը և Տէր-Գարբիկլը այդպէս է գրել, որ իրաւունք ստանայ Տէր-Աստուածատրին ոռնիկ նշանակելու և յետոյ արդէն պահանջուած տեղեկութիւնները նորան զրել տալու, ներսէսն իրաւունք է տալիս Տէր-Աստուածատրին տօնավաճառ երթալու, բայց տեղեկութիւնները գրելը լանձնում է Գարբիկին, որովհետեւ վստահ չէր նոցավերայ:

Դոյն ժամանակները արդէն լրանում է Գարբիկի նախիշևանում ուսուցչութիւն անելու երկրորդ տարին: Աշակերտներից յառաջադէմները կամենում են և ուսւերէն սովորել, որովհետեւ թէև կար հին վարժարանի մէջ ուսւ ուսուցիչ, բայց նոքա չէին ուղում յաճախել նորա մօտ՝ լեզուն չհասկանալու պատճառով: Գարբիկլը, որ փոխր ինչ ուսւերէն ևս դիտէր, սկսում է ուսւերէն սովորեցնել մի 3—4 հօգու, որոնք և շատ հեշտութեամբ սովորում են, որովհետեւ ամեն բան մեխնուում էր հայերէն և ամեն բան այդ միջոցով հասկանալի էր լինում: Միւս աշակերտների ծնողները պահանջում են, որ իրանց որդիներին ևս ուսւերէն սովորեցնէ Գարբիկլը, բայց նա մերժում է, ասելով, թէ առանց հասարակութեան կամքի չի կարող կատարել նոցա ցանկութիւնը, քանի որ իւր պայմանագրի մէջ չկար ուսւերէն սովորեցնելու խնդիրը: Այն ժամանակ նոքա բողոքում են, և քաղաքի կառավարութիւնը կարգադրում է, որ ով որ կամենում է, որ իւր որդին ուսւերէն ևս սովորէ, պարտական է հատուցանել Պատկանեանցին 10—10 մանէթ: Սորանից մեծ խովովութիւն ու աղմուկ է առաջանում, և խովովութիւն յարուցանողները լինում են նոքա, որոնք ուսումնարանի մէջ ոչ զաւակ ունէին, ոչ էլ բան էին հատուցանում, ինչպէս Վարդերես Հայաշեանը, Մըկըր Պօպովը, որոնք պնդում էին, որ Պատկանեանցը ուսւերէն չսովորեցնէ: Գարբիկին ինքն էլ շատ ցանկութիւն չունէր ուսւերէն սովորեցնելու, քանի որ ինքն էլ լաւ չդիտէր, բայց պահանջում էին ծնողները, զգալով օգուտը:

Քաղաքի կառավարութիւնը խովովութիւնների առաջն

առնելու համար, միւս անգամ կարգադրում է, որ ով ուղում  
է ռուսերէն սովորել, թող երթայ ռուս վարժապետի մօտ,  
բայց աշակերտները չեն կամենում, որ չզրկուեն հայերէնից: Ալդ  
ժամանակ հրաման է արծակուում, որ Գարբիկը մի օր հայե-  
րէն, միւս օրը ռուսերէն սովորեցնէ, բայց նա չի լոժարում,  
որովհետեւ այդ դէպքում նա կախումն պիտի ունենար Տաղան-  
րողի պետական ռւսումնարաննական վարչութիւնից: Դալիս է և  
Տաղանրողի զի՞նազինի վերատեսուչը, փորձում է աշակերտ-  
ների դիտութիւնը, զուխը շարժում և գնում է: Գարբիկը,  
վերջապէս, որոշում է ռուսերէնը հայերէնի հետ խառը սովո-  
րեցնել ամենին, բայց սորանից էլ անբաւական և դժգոհ են  
ֆում 10 մանէթ. տուողները, ասելով, թէ ինչու աղքատների  
զաւակներն էլ, որ ոչինչ չեն տալիս, միւնոյնը պիտի սովորեն: Դպրոցը  
այս ու այսպիսի հանգամանքների մէջ շատ չի զար-  
գանում, նամանաւանդ որ սովորութիւն էր եղել, որ տղայքը  
շուտով և անժամանակ թողնում էին ռւսման գործը թերի և  
ընտրում էին իրանց համար առեւտրական գործունէութիւն, որ  
մեծ շահ էր տալիս նոցա: Խսկ առեւտուրն այդ ժամանակնե-  
րը շատ զարգացել էր Նախիչևանցւոց մէջ—ցորենի, բրդի, եր-  
կաթի առեւտուր: Սկսում են Ռուսաստանի և ուրիշ տէրու-  
թիւնների զինուորական բանակների համար ծիերի երամակներ  
գնել զալմուխի, թաթարի և նողայի անտապատներից և տանել  
կեհաստան. սկսում են ոչխարի, եղերի և կովերի հօտեր գնել  
ոչ միայն մսի համար, այլ և բրդի, կաշուի, մորթու, նարպի  
և իւղի համար, սկսում են Սիրիրի կողմերն երթալ և արդար  
իւղ բերել և տանել վաճառել Պօլիս, Խտալիս, Յունաստան,  
Ֆրանսիա և Անգլիա: Երկու եղբայր Կարապետ և Խաչերես  
Աւստրանք, որոնք կոչուում էին Մոլլայի տղայք, սկսում են  
կանեփի և վշի սերմ ցանել, որ շատ տարածուում է և մեծա-  
մեծ վաստակ հայթայթում այդ գործով պարապողներին:

Դարբիկը, իւր ասելով, թէև չունէր համալսարանսկան  
դիտութիւն, բայց անդադար կարգալով, ինքնուսութեամբ սո-  
վորելով, գրելով ու շարադրելով այնքան զարգացրել էր իւր  
միտքն ու հոգին, որ շատ հմտացել էր բարձր կրթութեան հա-

մար աշակերտների միաթք մշակելու և նախապատրաստելու արուեստի մէջ, ինչպէս ցոյց է տալիս Նալբանդեանցի օրինակը։ Պահպան այս բոլորին շատ արդելք է լինում նախիշեանցւոց խոռվարար բնութիւնը, որ նոքա ժառանգել էին Անեցիներից։ նոքա շատ բան մոռանալով աղդպայինից, սեփականել էին իրանց Ղրիմի ծէսը, որ աղդպային էին համարում, և ոչ մի բանով չէին ուղում շեղուել նորանից։ Ահա այսպիսի հանդամանքերում լրանում է աղա Խաչատոր Խոմանեանի քաղաքագլխութեան եռամեակը և յաջորդ 1830, 31 և 32 եռամեակի համար Խալիբեանի գործ դրած շանքով ընտրուում է քաղաքագլուխ աղա Մարկոս Պօպովը, որ մի կատարեալ պատուհաս է դառնում գալրոցի և Պատկանեանցի գլխին։ Այս Խալիբի կողմից լինում է, նախ, մի վարձատրութիւն Մարկոս աղայի դէպի նա ցոյց տուած բարեացակամութեան և մտերմութեան համար, երկրորդ, նա կամենում է եղել հետեւեալ եռամեակի համար ինքն ընտրուել քաղաքագլուխ և ուղում է եղել, որ իրանից առաջ քաղաքագլուխ լինի մի այնպիսի անընդունակ անձն, որ յետոյ ինքը աւելի բարձրիզլուխ հանդիսանայ։

Այդ Մարկոս աղա Տէր-Մարկոսեանը, որ նախիշեանցւոց սովորութեամբ իրեւ քահանայի սերունդ իւր աղգանունը դիել էր թարգմանաբար Պոպով, մի շատ տգէտ, գոռող և վերին աստիճանի փառաւուէր մարդ էր։ Նա իւր այդ լատիկութիւններով ամենեին չէր յիշեցնում իւր ցեղի նախահայր Եւպատորիայի նշանաւոր աւագ քահանայ Տէր-Մարկոսին, որ այնքան նահատակուել էր իւր ազգի և հայրենիքի համար։ Դաւիթ-քէկի ապստամբութեան ժամանակները 1720 թուին Ղրիմից ուրիշ հայ ուխտաւորների հետ գնում են Երուսաղէմ և հրկու ծերացած և պատուալոր քահանայ՝ Թէոդոսիայի Տէր-Բարթուղիմոսը, որ հայոց բերդը շինող յայտնի Տէր-Մարկոսիայի ցեղիցն էր, և Եւպատորիայի աւագ քահանայ Տէր-Մարկոսը։ Սոքա հասնելով Երուսաղէմ և իւրեանց ուխտը կատարելով, առիթ են ունենում թէ ճանապարհին և թէ Երուսաղէմում պատահելու հայաստանից եկած ուխտաւորների և նոցանից լսելու հայրենիքի տառապանքի և Դաւիթ-քէկի Սիւնիք հրաւիրուելու մասին։

Ակտնատեսների պատմածների աղդեցութեան ներքոյ նոցա մէջ եռում է նախնի Անեցիների գիւղազնական արիւնը, և նոքա իւրեանց ձեռքը դնելով Քրիստոսի զերեզմանի վերայ երդուում են, ուխտ են կապում, որ երբ վերադառնան Ղրիմ, հաւաքեն պատերազմող մարդիկ հայ երիտասարդներից և երժան Դաւիթ-բէդին օգնութեան։ Նոյն 1720 թուի աշնան վերջին երկու քահանան հասնում են Ղրիմ և Թէոդոսիայում խորհուրդ անե։ լով, թէ ինչպէս կատարեն իւրեանց կապած ուխտը, և օգտուելով Հրեշտակապետաց տօնի Ռուբաթ երեկոյի նախատօնակի առթիւ եկեղեցի հաւաքուած ժողովրդի բազմութիւնից, հրաւիրում են զգեստատուն ականաւոր մարդկանց և յայտնում նոցա իւրեանց խորհուրդը։ Ամենքը հաւանում են և խոսանում են իւրեանց թէ նիւթական և թէ բարյայական օգնութիւնը ցըց տալ այդ կարեոր խորհուրդը զլովս հանելու գործին։ Ժամանակներն էլ շատ յարմար և նպաստաւոր էին. Ղրիմում այդ ժամանակ աւագանին-մրզաները ապստամբել էին իւրեանց իշխանաւոր Խափլան-Խանի դէմ, որ ժառանգել էր Ղաղի Գիրէկի աթոռը, և ամբաղջ թերակղզին ճիռում էր խոռվայցյ աղմուկի մէջ։ Կարճ միջոցում երկու քահանայի շուրջը հաւաքուում են 285 հոգի առոյդ երիտասարդներ և քահանաները, օգտուելով խանութեան սահմաններում կատարուող ժխորից, աննկատելի կերպով խումբ-խումբ ճանապարհ են հանում նոցա դէսի Փոքր Ասիոյ ափերը, ժամադիր լինելով միմեանց հանդիպելու Տրապիզոնում։

Ամենից յետոյ վաճառականի զգեստով և առանձին նաւերով ճանապարհ են ընկնում և ինքեանք քահանաները, նախալէս իւրեանց տեղը կարգելով քահանայ իւրեանց համանուն որդոյը հանութեամբ ժամանակի առաջնորդ Աստապատցի Վարդան եպիսկոպոսի։ Ժամադրած տեղը հասնելով, նոքա բաժանում են իւրեանց մարդկանց զանազան խումբերի, 10—15 հոգուց բաղկացած, և ընտրուած Օնբաշիների առաջնորդութեամբ, լազերի զգեստ հազցնելով ամենին, որպէս զի ճանապարհին նոքա անվտանգ անցնեն արիւնարրու Լազերի և վայրենի քուրդերի միշտց, ուղևորում են նոցա Դաւիթ-բէկի բանակը։ Խումբերը ա-

ուանձին-առանձին գնում են, նախ, Մուշ, յետոյ կարս և, վեր-  
շապէս, հասնում են Դաւիթ-բէկի բանալը 1722 թուին հէնց  
այն ժամանակը, երբ եկել էին և նշանաւոր Տէր-Աւետիք և  
Տէր-Մկրտչի քահանաները, և Դաւիթ-բէկի նշանակելով Միկ-  
թար դիւցազնին զօրագուլի, կաղմում էր իւր բանալը և սպա-  
սում էր Գենաւուղի Թորոս և Մեղրու Ստեփաննոս իշխաննե-  
րի գալստեան, որ գնայ Պարսից դէմ: Խրիմեցիք մնում են  
Հայաստանում մինչև 1729 թիւր և մասնակցում են Դաւիթ-  
բէկի մղած բոլոր ճակատամարտներին, իսկ երբ որ 1728 թուին  
մեռնում է Արևեաց հերոսը, նոքա հաւատարիմ մնում են նո-  
րա յաջորդ Միկթարին, մինչև որ 1729 թուին դաւանանու-  
թետմբ սպանուում է Խնձորեսքում և այդ դիւցաղը և բանակը  
ցըուում է: Այդ ժամանակ ահա վերադառնում են Ղրիմ իւ-  
րեանց մարդկանց հետ և Տէր-Մարկոսն ու Տէր-Բարթուղի-  
մէոսը, նախապէս այցելերով Մուշի Ս. Կարապետը, Որոտն ա-  
ւանը, որտեղ ժաղուած էր Տէր-Մաղաքիան, և կրծանուած  
Անին, որտեղից դուրս էին եկել նոցա նախնիքը, և այդ նուի-  
րական տեղերում իւրեանց ուխտը կատարելով: Բարեբաղդա-  
րար նոցա դնալը, Հայաստանում այնքան երկար մնալը և կոռւելը  
մահմեղականների դէմ և վերադառնալը անվտանգ տննկատելի է  
մնում թաթարներից: Բայց դաւանանութիւնը Հայերի միջից  
էր. կային ոմանք, որ նախանձում էին Տէր-Մարկոսի և Տէր-  
Բարթուղիմէոսի փառքին, և յատկապէս մէկը, որ կոչուում էր  
Դրնան Արթին և իւր լրտեսութեան, դաւանանութեան և  
մատնողութեան համար սիրելի էր խանին: Այդ Դրնան Արթինը  
և դորա համախոհները աշխատել էին վնասել նոցա, երբ գեռ  
նոքա Հայաստանումն էին, երկու անդամ առանձին մաշորու ծեռ-  
քով կեղծ նամակներ ուղարկելով և նոցա յետ կոչելով այն ա-  
ռակութեամբ, թէ թաթարները իմացել են նոցա գնալը և  
բանտարկել են նոցա աղքականներին ու սիրելիներին: Բայց չէին  
յաջողել. նոքա հասկացել էին կեղծիքը և չէին վերադարձել:  
Այժմ էլ երբ նոքա վերադառնում են իւրեանց սիրելիների մօտ,  
ենթարկուում են մատնութեան, Խանը կոչում է իւր մօտ ու

հարց ու փորձ անելով, արծակում է, կասկածելով Ռուսների վերահաս արշաւանքից:

Արթինը թէ և այս անգամ չի կարողանում վնասել Տէր-Մարկոսին և Տէր-Բարդուղիմէոսին և զոցա հետ դնացողներին և յետ դարձողներին, բայց մի հինգ տարուց յետոյ մեծ պատռհաս է բերում ընդհանրապէս Նրիմի բոլոր Հայերի զվահին: Ասում են, որ նա մահամերծ հիւանդանում է և խանը գալիս է տեսնելու իւր մտերմին: Գնալիս, խանը հարցնում է, ի՞նչ խնդիրք ունի իւր սիրելին: Հիւանդը շարունակում, թէ ինքը ոչինչ չի ուզում, միան որ խնդրում է, որ երբ ինքը մեռնի և տանեն թաղելու, իւր մարմինը գերեզման իշեցնելուց առաջ, նա բանալ տայ և նայէ: Խանը խօսք է տալիս և հրամայում է շրջապատողներին, որ անպատճառ իրան իմաց տան նորա մահուան և թաղման մասին: Արթինը կապում է իւր վզին մի հաստ կապցյա ժապաւէն և պատուիրում է իւրայիններին, որ ոչ մի դէպօւմ, մինչեւ խսկ իրան պատանելիս էլ, չքակեն այդ ժապաւէնը: Շուտով նա մեռնում է և մեծ քաղմութեամբ տանում են նորան թաղելու: Ճանապարհին յուղարկաւորութեան թափորին ընդառաջ դուրս է գալիս խանը և բանալ տալով նորա մարմինը և տեսնելով նորա վզի ժապաւէնը, թէ և հասկանում է իւր սիրելու կեղծիքը, բայց բոլորի վերայ մեծ տուդանք է դնում, ասելով, որ Հայերը խեղդել են իւր բարեկամին:

Ահա՝ վերցյիշեալ բարեկիշատակ Տէր-Մարկոսի ժառանգներից էր Մարկոս աղան, բայց որքան մեծ տարբերութիւն երկումի մէջ: Մարկոս աղալի իդէալն էր գանծը, նոխութիւնը. նա իւր փառքն ու պատիւր որոնում էր արքունի ծառայութեան և դորա հետ կապուած զանազան դատարկ սեթևեթների աստիճանների, փայլուն նշանազգեստի և զանազան շքանշանների մէջ, որոնց համար միշոցների մէջ էլ խրութիւն չէր անում, մոռանալով մինչեւ անդամ և աղդ և լեզու և ազգային դաստիարակութիւն: Նորա առաջին դորմն այն է լինում, որ կրնատում է ուսուցիչների ունիկը, յետոյ արգելում է: Պատկանեանցին ուսւերէնի դասատուութիւնը, որից և աշակերտներից շատերը թաղնում, հեռանում են դրա-

բողից. նա պահանջում է Պատկանեանցից, որ նա, բացի ուսուցչութիւնից, սարկաւագութիւն էլ անէ եկեղեցում, բայց նա մերժում է, որովհետեւ, նախ, այդ չկար նորա պայմանագրի մէջ, երկրորդ, դորա համար նա ժամանակ էլ չունէր։ Այն ժամանակ նա գրում է ներսէսին և պահանջում է, որ նա իրաւունք չունենայ հասարակութեան փողով վարձու ած վարժապետին ուրիշ գործեր լանձնել, բայց նա այդ նամակն ուղարկում է Գարբիկին և վերստին կրկնում է, որ իւր յանձնարարութիւնը կատարէ։ Նա գրաւում է և դպրոցի վերատեսչութիւնը և սկսում է աշխատել, որ վարժարանը հանէ հասարակութեան ծեռքից և ենթարկէ պետութեան ուսումնարանական իշխանութեան։ Մէկ ուսւ ուսուցիչ Սաբուն անունով խոստանում է տէրութիւնից պարզե բերել տալ նորա համար, եթէ նա կարողանայ այդ գույխ բերել, բայց Գարբիկը արգելու է լինում, ուստի և նա սաստկացնում է հալածանքը նորա դէմ, չանալով նորան իսպառ հեռացնել նախիշեանից։

1831 թուին Հաշտարխանի կողմերից տարածուում է մահատարաժամ, և Տէր-Գարբիկը Տէր-Գարբիկեան աւագ քահանան լունիսին վարունգ ուտելով, բռնուում է համաճարակից և մեռնում։ Պատկանեանցի հակառակորդները լուր են տարածում, թէ քահանան թունաւորուել է նորա ծեռքով, և երբ այդ սուտ է դուրս գալիս, որովհետեւ քիչ էր մնում, որ անդամահատէին, ատում են, թէ Պատկանեանցի պատճառով նորա մաղծը գույխն է տուել Համաճարակի պատճառով գալրոցը, հետեւլով տէրութեան ուսումնարանների օրինակին, փակուում է ամիս ու կէս ժամանակով։ Օգտուելով այդ պարապութեան ժամանակամիջոցից, ներսէսը հրամայում է Պատկանեանցին գնալ Քիշինև, և այդ հրամանը հասնում է նախիշեան Տէր-Գարբիկեանի թաղման միւս օրը։ Տրաւիրելու պատճառոն այն էր, որ ներսէս հաստատուած լինելով առաջնորդ նախիշեանի թեսսարաբից վիճակի, պիտի հաստատէր Քիշինեւում նոր կոնսիստոր, որովհետեւ Յովսէսի հաստատուծ կոնսիստորը Հաշտարխանութիւնը էր, իսկ այն վիճակը անցել էր Սերովաէ Կարնեցու ծեռքը։ Պատկանեանցը պիտի կազմակերպէր նոր կոնսիստորը, որովհետեւ և

նա 7 տարի առենադպղիք էր եղել չաշտարխանի կոնսիստորում և այդ պատճառով էլ յաւ գիտէր բոլոր կարգերը:

Մարկոս աղայի և նորան թելադրող Խալիքի համար լաւ առիթ էր թշնամաշնելու Գարբիէլին Ներսէսի հետ, ուստի և նորա նիդ են թափում, որ նա չկատարէ առաջնորդի հրամանը և չերթայ: Այս պատճառով էլ երր նա աղերսագիք է մատուցանում քաղաքացինին, որ նա հրամայէ հոգեւոր կառավարութեան, որ իրան անցաթուղթ տայ Քիշինեւ երթալու, գալիս են նորա կողմից չօրս մարդ, որոնց թուում և Խալիքը, և խոսանում են նորա ուռնիկը աւելացնել, միայն որ չերթայ, պատճառ բերելով մահտարաժամք: Գարբիէլը պատասխանում է, որ Ներսէսի հետ չի կարելի խաղալ և որ ինքն, իբրև հոգեւորական, պարտական է հնազանդել նորա հրամանին: Դորանից լեռայ որովհետեւ քաղաքացինի հրամանը արծակուրդ տալու ուշանում էր, Գարբիէլը նորից կրկնում է իւր աղերսագիքը և ստանում է արծակուրդ հետեւեալ մակագրութեամբ, թէ իրաւունք ունիս դնալու, միայն որ միւս անդամ այլ ևս չ'վերադառնաս. քո վարժապետութիւնը մեզ այլ ևս հարկաւոր չէ:

Նա գուրս է գալիս Նախիջևանից յունիսի 28-ին և հասնում է Քիշինեւ յուղիսի 6-ին ու տայիս է առաջնորդին Մարկոս աղայի մակադրած թուղթը: Ներսէսը հարցնում է, թէ ինչու եկար. նա ոչինչ չի պատասխանում, այլ միայն զարմանում է, որովհետեւ ունէր ծոցին նորա հրամանը: Նոյն բոպէին բերում են փոստը, և Ներսէս ստանում է Նախիջևանից երկու ծրար. առաջինը մի թուղթ էր 200 ստորագրութեամբ, որով քաղաքացիք բողոքում էին քաղաքացինի դէմ, թէ նա քանդում է զպրոցը, և գովում էին Գարբիէլին ու խնդրում, որ նորան քահանայ ծեռնադրէ և վարժապետութիւնը նորան յանձնէ, որ իրանց զաւակները ուսումից չըրկուեն. երկրորդը Մարկոս աղայիցն էր. նա գանգապատում էր Գարբիէլից, թէ նա առեսուրի բան չի սովորեցնում, այլ սաղմոս, շարական, պատմութիւններ, քարոզ ասել և այն այդպիսի անպէտք բաներ և, որ գլխաւորն է, անպատուում է քաղաքացինին, իւր զաւակին կրնքահայր անելով ոչ իրան, այլ Խոմաշեանին: Ներսէս այս խօս-

քերի վերայ ծիծաղում է և չի վերջացնում նամակը, որի վերջաբանն այն էր, որ Գարրիկը միւս անգամ չվերադառնայ նախիշեան։ Ներսէսն ասում է, թէ ինքը մինչեւ հիմայ հարծում էր, որ Մարկոս աղան լիրը ու յանդուգն է, իսկ այժմ իմացաւ, որ նա գիտ էլ է, որ կարծել է թէ Պատկանեանցի դաւակների հնքահայրութիւնն էլ կապուած է քաղաքավլխութեան պաշտօնի հետ։

### Գլուխ Զ.

Ներսէս հրամայում է Թաղէսոս սարկաւագ Բէկնազարեանին, որ լեայ ձեռնազրուեց վարդապետ և եղաւ առաջ Նրիմի լաջորդ, լետոյ Պարսկաստանի առաջնորդ, որ նա լաւ բնակարան ապայ Պատկանեանցին և հանգստացնէ, իսկ ինքը պատախան է զրում Մարկոս աղային, թէ տիրացու Գարրիկը միւս անգամ չի գալ նախիշեան, այլ նորա տեղ կ'գայ Տէր-Գարրիկը և, փոխանակ քաղաքային վարժարանի, կունենայ հոգեւոր վարժարան։ Նոյն իսկ օրը նա պատրաստուում է գնալ Գրիգորուացօլ, որովհետեւ այդ քանի օրերը պիտի գար Յարութիւն Ալամդարեանը, և նա կամենում էր դիմաւորել նորան։ Գարրիկը ընտրում է իւր համար բնակարան Գրիգոր սրբազնի բաղնիքը, որ լեայ հաւաքոյն էին շինել, և սկսում է մաքրել, բայց հէնց նոյն օրը մաղմացաւի է հանդիպում, և Ներսէսը քանից այցելում է նորան և հրամայում է իւր բժշկին լաւ խնամել նորան։

Մինչդեռ Գարրիկը հիւանդ պառկած էր Քիշինեւում, Ալամդարեանը եկել էր Նախիշեան և հակառակորդները լցրել էին նորա ականչը անցած-գնացած դէպքերի պատմութեամբ ու իրանց կողմը դրաւել նորան։ Ալամդարեանի հետ Պատկանեանցը ծանօթացել էր Հաշտարխանում դեռ 1822 թուին, երբ նա եկել էր այնաեղ Մոսկովից, միտքը դրած լինելով բռնել նորա տեղը, բայց չէր լաջողել։ Նա ստիպուած էր եղել շուտով վերաբառնալ իւր տեղը, որովհետեւ լսել էր իւր կնոշ մերձ'ի մահ հիւանդանալը։ Մի քանի օր Նախիշեանում մնալուց յետոյ, նա ճանապարհ էր ընկել և եկել, հասել Գրիգորուացօլ, բերելով իւր

և Ներսէսի քեռորդի Զաքարիա Յովհաննիսէան Շահազիգեանին։ Վերափոխման պահոց Եօթնեակին վերադառնում է Գրիգորուածօից Ներսէսը, բերելով հետը իւր քեռորդուն և Ալամդարեանին, որ արդէն կարողացել էր այն աստիճան փոխել առաջնորդի տրամադրութիւնը դէպի Դարրիկլը, որ Շահազիգեանը ուղղակի ասում է նորան, թէ այսուհետեւ Նախիչևանի դուռը փակ է քո առաջ։ Վերափոխման տօնի օրը, որ և Քիշինեւի եկեղեցու տօնն էր, առաջնորդը մեծ բնդունելութիւն է ունենում։ ամենքը գալիս են շնորհաւորելու սրբազնին և նորա աջն առնելու։ գալիս է և Դարրիկլը, որ այդ օրը վերաբերում էր արել, բայց Ներսէսը կանգնեցում է նորան և սկսում է նախատել նորան, պատմելով հանդիսականներին ամեն բան, ինչ որ միայն դիտէր նորա մասին, սկսած 1802 թուից, թէ ինչպէս նա նորան հրաւիրել է Թիֆլիս, բայց նա չի դնացել, և տեղը նորա ցուցմունքով Գէորգ աղա Արծրունին հրաւիրել է Ալամդարեանցին, ինչպէս նա 1827 թուին գնացել է Նախիչևան և շփոթութիւն ձգել այնտեղ ժողովրդի մէջ, այնպէս որ նա արտաքսուել է Նախիչևանից և քաղաքացիք Ալամդարեանի բերանով լուր են ուղարկել իրան, որ նորան միւս անդամ Նախիչևան չուղարկէ, և այլն։ Հէնց այդ խօսքերի վերայ ուշաթափուում է Ալամդարեանը, և նա չի կարողանում աւարտել իւր խօսքը։ Ալդ ժամանակն էլ հէնց թղթասարը բերում է „Ծեւերնայ Պчելա“ օրագիրը, որ Ներսէսը տալիս է կարդալու Դարրիկլին։ Յայտնուում է, որ լրագրի մէջ տպագրուած է, ի՞ միշի այլոց, կայսերական հրաման Եփրեմի հրաժարականը ընդունելու և կարբեցուն հայրապետ ծեռնադրելու։ Ներսէսն այլայլուում է և թու թիր պատուիրելով Դարրիկլին թորգմանելու, ասում է։ «պատերազմ ունիմ նիկոլայի հետ։ Նա պէտք է իւր կայսերական խոստմունքը կատարէ։ Ես չեմ թողնիլ, որ Յովհաննէսը պղծէ հայրապետական աթոռ»։ Երբ Դարրիկլ թարգմանում, վերջացնում է կայսերական հրամանները, Ներսէսը նորից փոխուում է դէպի նա։ նորա հետ փոխուում են և միւսները։ Առաջնորդի եղրօր որդի Յովհակիմ կարապետեան Շահաղիղեանը, որ առաջնորդարանի ելքի ու մուտ-

քի վերակացուն էր, այդ ժամանակ Ներսէսի առանձին լանժ-նարարականով գնում է Թիֆլիս: Աղամդարեանը կարծում էր, որ ինքը կ ստանայ նորա պաշտօնը, բայց Ներսէսը տալիս է նոյն պաշտօնը Գաբրիէլին, որ սակայն ինքը ստանձնում է միայն ընդհանուր վերակացութիւնը, իսկ Ներքին տնտեսական գործը՝ առաջնորդի համաձայնութեամբ, լանձնում է Տէր-Անտոն աւագ քահանայի երիցակնոց—«Տիրուհուն», որ Գրիգոր եպիսկոպոսի օրով աղասա մուտք էր ունեցել առաջնորդարան: Ներսէսը սիրում էր Աղամդարեանին, ինչպէս որդի, բայց տնտեսական գործին մօտ չէր թողնում. նա էլ կարծելով, որ դորա պատճառը իւր առաջնորդարանից հեռու բնակուելն է, տեղափոխուում է այնտեղ, որտեղ առաջ ապրում էր զնդապետ Յարութիւն Մակարեան Խուդաբաշխեանը, որի մի եղբայրը Գրիգոր քաղաքավուն էր Գրիգորուապում և դորանից երկու ամիս առաջ մեռել էր, իսկ միւս եղբայրը ժեներալ Աղէքսանդրն էր որ ապրում էր Պետերբուրգում:

Աղամդարեանի Հաշտարխանից գուրս գալուց և Քիշինե ժամանելուց յետոյ, եկել էր Նախիջևան Բզնունեանց Սիմէօն եպիսկոպոսը և մնացել էր այնտեղ, որովհետեւ ճանապարհին ոտքը կոտրել էր. նա կամենալով նշանել Աղամդարեանի գուստը Գաբրիէլի եղբօր տիրացու Պետրոսի հետ, գրում է այդ մասին Քիշինեւ Ներսէսին, Աղամդարեանին և Գաբրիէլին: Ներսէսը կամք է տալիս և խօսում այս մասին Գաբրիէլի հետ և վերջացնում գործը, մինչ փեսան Նախիջևանումն էր, հարսնացուն Հաշտարխան: Օժիտը խօսուանում է տալ Ներսէսը, որ դեռ Թիֆլիզում նշանակել էր Աղամդարեանի ամեն մի աղջկան երկու-երկու հազար առ ծեռն պատրաստի գումար և երկու-երկու հազար թղթադրամ էլ զարդերի համար: Սիմէօն եպիսկոպոսը հաւանելով Նախիջևանին, միտքն է զնում առ միշտ մնալ այդ տեղ և այդ նպատակով կամենալով երկուսի՝ Աղամդարեանի և Գաբրիէլի ճանապարհն էլ փակել դէպի Նախիջևան զրում է Ներսէսին, ի միջի այլոց, և այն, թէ Պատշաճանցն այսուհետեւ այլ ևս ընդունելի չի լինիլ Նախիջևա-

նում, իսկ Յարութիւն վարդապետը կարող է պատառել քո առաջնորդութիւնը:

Մի օր երբ Գարբիկելը զբաղուած էր առաջնորդարանի այգու այգեքաղի գործով և մշակներ էր վարձում, յանկարծ դուրս է գալիս Ներսէսը և արծակում մշակներին, ասելով, թէ դեռ կարելի է այլ ևս մի քանի օր սպասել. նա, ի միջի ալլոց յայտնում է, թէ նամակ է ստացել Բղնունուց և մտադիր է առաջիկայ կիւրակիւն ծեռնադրութիւն անել. Թաղէսոս սարկաւագին պիտի տայ արեղայութիւն և ուղարկէ Ղրիմ յաջորդութեան պաշտօնով, իսկ իրան, Գարբիկին, քահանայութիւն և ուղարկէ Նախիչևան։ Գարբիկելը պատասխանում է, թէ ինքը չի ուղում գնալ Նախիչևան և թէ ծեռնադրութեան համար դեռ պատրաստ չէ—պաս չի կարող պահել և կիւտնդութեան խաղաւարտները դեռ չեն անցել մարմնի վրայից։ Ներսէսը բարկանում է և մտնելով առաջնորդարան ու պատահելով Աղամդարեւնին, ասում է, թէ ինքը ուղում է Պատկանեանցին ծեռնադրել, իսկ նաև հրաժարուում է, ասելով, թէ խաղաւարտներ կան մարմնի վրայ և պաս չի կարող պահել։ Ներսէսը կամենում էր Գարբիկին քահանայ ծեռնադրել և ուղարկել Նախիչևան, որ Մարկոս աղան, Խալիբը և դոցա համախողները, որոնց նա մի անունով կոչում էր «Խալիբի սրիկայք», չարձեին, թէ նա վախենում է նրանցից։ Գարբիկելը խնդրում է, որ իրան Պետերուրդ ուղարկէ, բայց Ներսէսը մերժում է, ասելով, թէ չես դիմանալ Լաղարեանների բըռնութեան։

Հասնում է, վերջապէս, նոյեմբեր ամիսը, և Գարբիկի միտքը փոխում է. նա համաձայնում է վերադառնալ Նախիչևան, որովհետեւ իմացել էր հօրից, թէ Սերոք արքեպիսկոպոսը հասել է Հաշտարխան և գրել է Սերովիք վարժապետին, թէ նոքա թող գան։ Նա խորհում է քահանայ ծեռնադրուել Ներսէսից, վերադառնալ Նախիչևան և իւր ծնողների հետ գնալ Հաշտարխան և վերանորոգել տպարանը, որ Յովսէփի ժամանակից մնացել էր խանդարուած։ Զեռնադրութիւնը պիտի լինէր 1832 թուի սկզբին. Մոսկովից պիտի դար մի նորդնժացու, Գրիգո-

րուապօռում էլ կար մէկը. Գարբիելը սկսում է իւր պատրաստութիւնը տեսնել, թէև Ակամդարեսնը, առաջնորդի գրադիր «կաշի» կոչուած Ստեփան վարդապետ Վաղարշապատցին և Նախիջևանի ս. Խաչի վանահայրը «մասսապարա» Մկրտիչ վարդապետը համոզում էին նորան նախիջևան չերթար:

Դեկանմբերի 31-ին հրաման է լինում Գարբիելին երթար Գրիգորուազոլ և այնտեղ սպասել առաջնորդի գալստեան: Յունուարի 1-ին Գարբիելն արդէն այնտեղ է լինում և գնում է այցելութեան Յարութիւն Խուղաբաշխեանին, որ բնակում էր իւր Գրիգոր Կղորօ տանը. Նա հիւանդ էր և անկողնում նրատած, հաւի միս էր ուառում: Նա հարցնում է Գարբիելին նորա Գրիգորուազոլ գալու պատճառը և խմանալով, որ եկել է ծեռնադրուելու, ասում է թէ չի ուղենալ նորան քահանայ տեսնել: Գարբիելը պատասխանում է, թէ դորս շատ հեշտ ճանապարհը կայ՝ փոխուել առ. Աստուած: Նա ծիծաղում է և հաւի ոսկրը մնում է կոկորդում ու մեռնում է: Յունուարի 10-ին գալիս է առաջնորդը, բերելով իւր հետ վարդապետներին, երիցախոզը և ուրիշներին—ընդամենը 10 կառք: Զեռնադրութիւնը լինում է կիւրակէ, Յունուարի 17-ին և նորբնձայ Տէր-Գարբիելը սկսում է քառասունք պահել ս. Նշան եկեղեցում: Միւս օրը գալիս է նորան այցելութեան Սրբազանը և օրհնում ու վերշին պատուէրներն է տայիս, խոստանալով Քիշինեակց ուղարկել նորա իրեղէնները և քահանայութեան վկայականը: Տէր-Գարբիելի քառասունքի ծանծրացուցիչ միայնութիւնը փարատում ու միիթարում են տեղի երկու զառամեալ քահանաները Տէր-Գէորգը և Տէր Յովհաննէսը, որոնց գալիս են նորա խուցը և հնութիւնից և մոռացուած անցեալից զանազան հետաքրքրական պատմութիւններ անում. նոքա, ի միջի այլոց, հաղորդում են նորան զանազան տեղեկութիւններ Ղրիմի գաղթականութեան մասին և մատնացոյց են անում մի ծեռագիր տետրակի վրայ, որ պահպանւում էր տեղացի բնակիչ ծերունի Դաւիթ-Բէկի մօտ, որ Ներսէս սրբազանի լու բարեկամն էր: Նա խնդրում է այդ ծեռագիրը և նորա մէջ կարդալով վերոյիշեալ Տէր-Մարկոսի և Տէր-Բարդուղիմէոսի պատմութիւնը, ուղարկում է նոյն տես-

րակը կարդալու առաջնորդին. նա էլ տաղիս է Ազամդարեանին, իսկ այդ վերջինը յանձնում է Ստեփան Շկաշից վարդապետին, որ հասցնէ Տէր-Գարբիկի ծեռքը, բայց նա չի կատարում այդ յանձնարարութիւնը և գնում է ո. Էջմածին և ծեռագիրն էլ հետև է տանում: Փետրուարի 28-ին լրանում է քառասունքը և Տէր-Գարբիկի, որ այդ ժամանակ լինում է ուղիղ 30 տարեկան, պատարադ է մասուցանում հերթով երկու եկեղեցում ևս և ժողովրդի ցանկութեամբ քարոզ է ասում: Դոյն իսկ օրերը վախճանում է իշեալ ծերունի Դաւիթ-Բէկը, և Ներսէսը նորից գալիս է Գրիգորուազոլ ներկայ գտնուելու իւր բարեկամի լուղարկաւորութեան. նա դամբանական է խօսում և հիացնում ժողովրդին, որ լսել էր Գիւմուշիանցի Մանուկի վարդապետին, որ հուչակուած էր իրրև հրաշաքարոզ:

Մաղկազարդին նա հրաման է ստանում գնալ Քիշինե և խոկոն ճանապարհ է ընկնում, բայց կառապանի հարրած լինելու պատճառով, նա շեղուում է ճանապարհից և ընկնում է Բենդեր, որով և անակնկալ կերպով առիթ է ներկայանում նորան տեսնել և այդ քաղաքը: Բայց Քիշինեից, Գրիգորուազօլից և Բենդերից նա այդ ժամանակները տեսնում է և Աղքիման քաղաքը, ուր ուղարկում է նորան Քիշինեից առաջնորդը՝ Գրիգորի ժամանակներից մնացած առաջնորդապատկան իրեղէնները բերելու: Տէր-Գարբիկին ճանապարհ ծղելու համար հաւաքուում են առաջնորդարան Յարութիւն Ազամդարեանը, Քիշինեի Գէորգ վարդապետը, Մկրտիչ վարդապետը, Յարութիւն աւագ քահանան, Սողոմոն Քէթիսուղովը և միւսները; Ներսէս Յովհաննէս սրբազնի Պատկանեանցին տուած վկայականից հաւաստիանալով, որ նա, երբ քահանայ ծեռնազրուի, իրաւունք պիտի ունենայ աւագութիւն ստանալու և Ըստարայ փիլոն կրելու, տալիս է նորան 200 բուրյի և պատուիրում է Օղեսսում գնել իւր համար ծաղկեայ փիլոնացու և նոյն գնով կամիլաւկայ: Յարութիւն վարդապետին էլ հրամայում է մի թուղթ դրել նախարարութեան Տէր-Գարբիկի մասին, թէ ինքը կոչել էր նորան Քիշինեի Հողեսոր կառավարութիւնը վերածելու կոնսիստորիայի, և նա յաջողութեամբ կատարել է իւր հրամանը, որի համար և

ինքը ծեռնադրեց նորան քահանայ Նախիջևանի Ս. Կուսաւորիչ  
եկեղեցու վերայ, յանձնելով նորան միանգամայն և բոլոր եկե-  
ղեցիների տնօրինութիւնը թէ Նախիջևանում և թէ շրջակայ-  
քում: Ապրիլի 29-ին դուրս գալով Քիշինևից, նա մայիսի 1-ին  
հասնում է Օդեսա, որտեղ ներկայանալով Վորոնցովին, մատու-  
ցանում է Ներսէսի նամակը և նորանից էլ նամակ ստանալով  
Տաղանրոդի քաղաքապետ Դունայևի վերայ և տեղ հասցնելով,  
ժամանում է Նախիջևան մայիսի 10-ին, ընդամենը մնալով Քի-  
շինեում 11 ամիս:

Ներսէսը հրամայել էր, որ վախճանած Տէր-Գարրիկեանի  
ծուխը տրուի Պատկանեանցին, բայց որովհետև ինքը հանգու-  
յեալ Տէր-Գարրիկեանը իւր ծուխն անձամբ երթէք չէր հովուել,  
այլ Տէր-Մինասի և Տէր-Աստուածատուր Շապոչնիկեանի ծեռ-  
քով, այդ պատճառով էլ նորա մահից յետոյ նորա ծուխը մնա-  
ցել էր նոցա ծեռքին: Առաջնորդի հրամանի մէջ կար և այն  
պայմանը, որ ով այն ծխականներից կամենայ Պատկանեան-  
ցի ծուխը լինել, պէտք է թղթով լսայնէ այդ մասին հոգևոր  
կառավարութեան և կամ անձամբ երթայ և ծեռադիր տայ:  
Ակսուում է խոռովութիւն, որովհետև հոգևոր կառավարութեան  
դրան առաջ Մարկոս աղայի հրամանով կանդնում են լրտեսներ  
և եկող-գնացողներին բէշիներով<sup>7)</sup> տանում էն Մազիստրտտ,  
որտեղ նոցա հայրոյում, նախատում և շատ նեղութիւն են տա-  
լիս, թէ ինչու նոքա Պատկանեացի ծուխ են զրուել և զրուում:  
Ներսէսը տեսնելով, որ այդ միջոցով չի կարողանում Տէր-Գար-  
րիկի համար ծուխ կազմել, հրամայում է, որ առհասարակ ով  
որ կամենայ և ուրիշ ծխերից ինքնալօժար նորա ծուխը լինել,  
կարող է անարգել Այս միջոցը լաշողութիւն է գտնում, բայց  
ծուխ են զրուում միայն հայածեալները, վշաացեալները, խեղ-  
ճերն ու աղքատները, և այդպիսի գերդաստանների թիւր հաս-  
նում է 150-ի: Աստուած սակայն շուտով օրինում է, և նորա  
ծխի մէջ էլ կարն միջոցում երեւում են հարուստներ և առհա-  
սարակ կարողութեան տէր մարդիկ: Սակայն Տէր-Գարրիկի և  
նորա այդ ծխականների մէջ յաճախ պատահում են գժառու-  
թիւններ, որովհետև նա չէր սիրում ուտել, խմել, երկար նրս-

տեղ տօներին, խնդրվներին, հրաւերքներին, ուստի և ծխականները կարծում էին, որ իրանց տան քահանան արհամարհում է, բանի տեղ չի գնում իրանց։ Եւ այս գժառութիւնները բոլորը ևս բարօփ ձեւով ու սև ու թանձրացած գոյներով զրուում էին առաջնորդին և այդ բոլորին էլ վկայութիւն էր տալիս Թղնունին, որ Տէր-Գարբիկի անկումը կամենում էր իւր համար բարձրանալու աստիճան շինել։

Այդ Թղնունի եպիսկոպոսը՝ կամենում է մինչև անդամ թրշնամութիւն սերմանել և Պատկանեանցի ընտանիքի մէջ. նա անդադար դրգուում էր նորա ծնողներին, թէ ինչու Տէր-Գարբիկը չի շտապեցնում տիրացու Պետրոսի ամուսնութիւնը, որ ինքը նորան քահանայց ձեռնադրէ, թէ ամենքն էլ զիակին, որ նա իրաւունք չունի, չի կարող ներսէսի վիճակում ձեռնադրութիւն անել։ Տէր-Գարբիկը ստիպուած է լինում հոգևոր կառավարութիւնից շուտով անցաթուղթ տալ եղանակ, որ նա երթայ Հաշտարխան և ամուսնանայ։ Տիրացու Պետրոսը տանում է իւր հետ եղրօր նոր միայն դրամ «Յեփթայէ» բանաստեղծութիւններից մի օրինակ, որ տեսնում ու կարդում է Սերովիկ եպիսկոպոսը և այնքան հաւանում, որ Տէր-Գարբիկի անունը դնում է «Յեփթայէի հեղինակ»։ Սիմէօն եպիսկոպոսը արգելք է լինում նորա դործունէութեան և հոգևոր կառավարութեան մէջ. նա սեփականել էր իրան բոլոր հոգևոր գործերի տնօրինելու իրաւունքը, իբրև պատկեր վիճակաւորի։ Տէր-Գարբիկը որպէս զի կարողանայ կառավարութեան վերին աստիճանի խնճուած գործերը կարդի բերել, ստիպուած է լինում բոլոր իրաւունքը խլել նորա ձեռքից։ Նա Յովհաննէս սրբազնի 1815-ին մացրած, բայց անզործալը ելի մնացած հաշուենաւենները աշխատում է գործազրել և պարզել եկեղեցիների ելեմուտքը։ Յայտնւում է, որ Լուսաւորիչ, Համբարձում և ո. Թուրոս միասին ունին 10 հազար ռուբլի թղթադրամ, Ս. Գէորգ—30 հազար, իսկ ո. Աստուածածինը, որ Մըկըր աղայի ձեռքին էր, ընդդիմանում է և հաշիւ չի տալիս, որից և առաջ է գալիս Մըկըր Պօպովի բաղմակննիո։ հաշուետուութեան գործը,

որի համար ուղարկուում է Նոխիջևան Թաղէսս վարդապետ թէկնազարեանք:

Առաջնորդին Պատկանեանցի վերայ ուղարկուած բաղմաթիւ բողոքները, որոնց մէջ խառն էր, ինչպէս ասացինք, և թղունի Սիմէօն եպիսկոպոսի մատր, վերջապէս, ունենում են իւրեանց աղջեցութիւնը: Յանկարծ գալիս է Սողոմոն Քեթիուղովը և երեք օր մնալով եպիսկոպոսի տանը, վերջին, զնալու օրը փայն մտնում է Պատկանեանցի տունը, տալիս է ներսէսի ծրարը և զնում է: Թղթի մէջ զրուած էր յանդիմանութիւն, հիմուած զրաբարտութիւնների և խեղաթիւրուած փաստերի վերայ, որից այնքան վշտանում է նա, որ «մի անսանձ մորեգնութիւն» է ընկնում նորա սրտի մէջ, և նա մի յանցուցն պատսախան է զրում, որ վերջանում էր հետեւեալ խօսքերով՝ «յերեսս ոնկեալ աղերսեմ առաջ ինձ հրաման զալ՝ ի Դրիգորուապօլ և անդ՝ ի ձերում առենի երես առ երես վիճաբանել ընդ այնոսիկ, յորս միանգամայն մատնացոյց եղեալ է զրաբարտիչն, և թէ հանց իցէ ձերում սրբազան քահանայապետութեան՝ յատենի անդ գտցի և պատգամաւոր՝ ի դիմաց Վորօնցով կոմսին»: Սորա հետեւանքն այն է լինում, որ ներսէս միհթարական նամակ է զրում նորան և հրամայում Սիմէօն եպիսկոպոսին վերադառնալ Ա. Էջմիածին:

Տէր-Գարբիէլը երբ վերաբառնում է Քիշինեւից, սախառուած է լինում հրաժարուել քաղաքալին վարժարանի ուսուցչութեան պաշտօնից, որովհետեւ Մարկոս աղան տեսնելով, որ նա պաշտօն է վարում և հոգևոր կառավարութեան մէջ, կրտրում է նորա ոռնիկը: Այն ժամանակ նա առաջնորդի հրամանով բաց է անում հոգևոր վարժարան և իւր վարժապետութեան գործունէութիւնը փոխազրում է այնտեղ: Նոր բացուած դպրոցով Նախիջևանում դպրոցների թիւը այդ ժամանակ լինում է չորս՝ խօնախ կամ քաղաքալին նորաշէն վարժարան, որի մէջ Մարկոս աղայի բարեհանութեամբ վարժապետութիւն էր անում թիւիշի: Օհան անունով մէկը, որ իւր տղիսութեամբ լիշեցնում էր նախակին Յովհաննէս վարժապետին, Եկանեանի վարժարան, որի մէջ ծաղկած էր վայելչազրութեան արուեստը,

և Թէոդորոս Խաղամեանի վարժարանը, որ շատ քիչ աշակերտ ունէր և այդ պատճառով էլ շուտով փակուում է, և Խաղամեանը զբագրի պաշտօն է ստանձնում Որբոց Խրաւարանում։ Հոգևոր վարժարանը եկամուտ չունէր, միայն տունը վարձուում էր եկեղեցական փողով, որովհետև նոյն շէնքում տեղաւորուում էր և Հոգևոր կառավարութիւնը, իսկ ինքը Պատկանեանցը իւր վարժապետութեան համար ոչ մի վարժարութիւն չէր ստանում։ Այդ Հոգևոր վարժարանի աշակերտների համար է լինում, որ նա զրում է իւր անոր Յեփթալէծ-ն, որի մասին մենք վերը խօսեցինք։

Մարկոս աղան տեսնելով, որ իւր բողոքները մնացին անհետեանք և Պատկանեանցը քահանայ ձեռնալրուած վերադարձաւ Նախիչեան, ստանձնելով պաշտօն և Հոգևոր կառավարութեան մէջ և Հոգևոր վարժարան ևս բանալով, դիմում է մի ուրիշ միջոցի։ 1832 թուի հոկտեմբերի 10-ին քաղաքական դումի ժողովում 186 մարդու ստորագրութեամբ մի համախօսական—«բրիկաւոր»—է կազմում և ուղ արկում առաջնորդին, խնդրելով հեռացնել քաղաքից ոչ թէ միայն Տէր-Գարրիկին, ալ բոլոր Պատկանեանց տօնմը իրրե մլասակար, խոռվութիւն լարուցանող և առաջնորդի սիրար հասարակութիւնից առուեցնող։ Թէ ինչ հետեւանք է ունենում այդ համախօսականը, մենք չենք կարող ասել, բայց պէտք է կարծել, որ առաջնորդը ուշադրութիւն չի դարձնում և դորա վերապ, որովհետեւ Պատկանեանցը դրանից լետոյ էլ դեռ երկար ժամանակ մնում է Նախիչանում<sup>8</sup>)։

ԵՐ. ՇԱՀԱԶԻԶ